Արձանագրություն N 2
ՄՄԾ ԳՀԾՁԲ-26/9 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 02 փետրվարի 2026թ
ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Անի Սարգսյանը
անդամներ՝ Ալիսա Հայրապետյանը, Հայկ Ղազարյանը, Անի Ջանոյանը, Լուսինե Շարաֆյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

ՄՄԾ ԳՀԾՁԲ-26/9 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 2026թ հունվարի 29-ին կայանալիք հայտերի բացման և գնահատման նիստն իրավազոր չէր՝ բացակայում էր հանձնաժողովի (armeps.am) համակարգում բացող անդամ՝ Նվարդ Սարգսյանը /գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ: Հնարավոր չէր ապահովել Միասնական սոցիալական ծառայության գլխավոր քարտուղարի 2026 թվականի հունվարի 19-ի № Ա/6 հրամանով գնահատող հանձնաժողովի անհատական կազմում ընդգրկված՝ (armeps.am) համակարգում հանձնաժողովի բացող անդամ Նվարդ Սարգսյանի ներկայությունը, ուստի կասեցվել է գնման գործընթացը և հետագա բնականոն գործընթացն ապահովելու նպատակով, 2026թ. հունվարի 30-ի № ԱԹ/16 հրամանով հանձնաժողովի կազմում կատարվել է փոփոխություն և հանձնաժողովի կազմում ընդգրկվել է Իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի գլխավոր իրավաբան՝ Լուսինե Շարաֆյանը:

I. Հայտերի բացման մասին

(Անի Սարգսյան)

ա/ Սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	***Մասնակցի անվանումը***		***Մասնակցի կապի միջոցները***
1	2		3
1	«ԼԵԳԱԼ 11» ՍՊԸ	-	ՀՀ Կոտայքի մարզ ք. Չարենցավան 8 Փ, Շ10, բն.33 հեռ. + 374 33 36 45 45, legal112027@ mail.ru
2	«Քինգ Մարշալ» ՍՊԸ	-	Արարատի մարզ, Նոր Խարբերդ 10փ. 13/2, հեռ. 098470040, 81-22, 011-81-22-00, info@kingmarshal.am
3	«ԷԼ-ԷՆ ԳԱՐԴ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ*	-	ՀՀ Կոտայքի մարզ ք. Չարենցավան 7թ., 8շ., 18բն., հեռ. +37494 110610, arshav1980@mail.ru

***Մասնակիցը ԱԱՀ վճարող չէ**

բ/ էլեկտրոնային (ARMEPS) համակարգի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերը դիտվել են որպես (պիտանի) հայտեր:

գ/ Մասնակիցների կողմից ծառայությունների մատուցման համար առաջարկված գինը հետևյալն է.

Հ/Հ	Մասնակցի	
	անվանումը	առաջարկած գինը առանց ԱԱՀ-ի (ՀՀ դրամ)
1	2	3
1	«ԼԵԳԱԼ 11» ՍՊԸ	9700000
2	«Քինգ Մարշալ» ՍՊԸ	10823000
3	«ԷԼ-ԷՆ ԳԱՐԴ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ*	9850000
գնման գինը (ՀՀ դրամ)		20000000

դ/ Հայտերի հետ կանչ կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել: Գնման առարկայի բնութագրերի հիմնավորումներ չեն պահանջվել և չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

II. Հայտերի գնահատման մասին

(Անի Սարգսյան)

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց հայտերով ներկայացված փաստաթղթերը և արձանագրեց, որ. մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը:

Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց մասնակիցների կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերը և արձանագրեց, որ.

1) «ԷԼ-ԷՆ ԳԱՐԴ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ-ի հայտում առկա է անհամապատասխանություն հրավերով սահմանված պահանջների նկատմամբ, մասնավորապես.

ա) ընկերության կողմից դիմում հայտարարությամբ ներկայացված իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը 19/11/2023թ հաստատված հայտարարագրի հղումն է՝ սակայն վերջին հայտարարագիրը պետք է պարունակեր իրական շահառուների վերաբերյալ արդիական տեղեկություններ նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ, որը իրավաբանական անձը պարտավոր է գործակալություն ներկայացնել մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 20-ը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Կարգի 41-րդ կետի և հրավերի 8.9 կետով սահմանված պահանջներով գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա/ կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և գնանշման հրավերի 8.9 կետով սահմանված կարգով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

բ/ ընթացակարգի հայտերի գնահատման նպատակով գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել 2026թ. փետրվարի 4-ին ժամը 10.40-ին ք. Երևան, Նալբանդյան 13 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Անի Սարգսյան

անդամներ՝ _____ Ալիսա Հայրապետյան

_____ Հայկ Ղազարյան

_____ Անի Ջանոյան

_____ Լուսինե Շարաֆյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

շահերի բախման բացակայության մասին

ք. Երևան 02 փետրվարի 2026թ.

ՄՍԾ ԳՀԾՁԲ-26/9 ծածկագրով գնանշման հարցման ձևով ծառայությունների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Անի Սարգսյանս, անդամներ՝ Ալիսա Հայրապետյանս, Հայկ Ղազարյանս, Անի Ջանոյանս, Լուսինե Շարաֆյանս հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Ջանջուղազյանս նշված ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հայտարարում ենք, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

Հանձնաժողովի

նախագահ _____ Անի Սարգսյան

անդամներ՝ _____ Ալիսա Հայրապետյան

_____ Հայկ Ղազարյան

_____ Անի Ջանոյան

_____ Լուսինե Շարաֆյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան